59. ԽԵԼՔ ԿԱ, ՓԱՐԱ ՉԿԱ

Կէղնի, չէղնի մարդմ՝ կէղնի, էգ մարդն է, ինչ խըդար փողներ կօլըրդի, կպորա ու ինքն ուրեն կկանչե.—Խելք կա, փարա չկա։

Օրըմ լէ էդ հըմալ օր կպորա, կանչե, զանկին մարդըմ էգ մարդուն հ՝ըռաստ կիգա։ Հըռաստ կիգա, կասե.—Ջանը՛մ, քու խելքն ի՞նչ է օր կասիս. «Խելք կա, փարա չկա»—ասե տեսնամ։

Էդ սարսարի մարդն է, կասե.—Ես չըմ կռնա ըիրտան բիր ասիմ իմ խելք, տո՛ւր զփարեն, հանտե կտեսնաս իմ խելք ի՞նչ է։

Էդ հըմալ օր կասե, թուճար կհանե հինգ հարիր օսկի կիտա, կասե.—Հա՛ն զքզիկ փարա, զքու խելք ցուցու ընծիկ։

Մարդ կառնե զհինգ հարիր օսկին, կէրթա կիտա զըմեն, խըսիլ կառնե, կտեսնան օր խըսիլ առավ, բերեց զկրակ գրեց հեռու, վառեց. ջուհաբ կիտան էդ զանկին մարդուն.

— Ջասի՞ս, քու մարդ օր կասեր. «Խելք կա, փարա չկա», դու լէ ավտրցար, հանիր հինգ հարիր օսկի տվիր, տարավ զարկեց խըսլի գլուխ, կրակ թողեց հ՝ինք, էրեց փոշի, դրեց գետին։

Թուճարն է, զէդ օր լսեց, հ՝էլավ հ՝ընկավ շուկի լենք ու հ՝էրկենք, փնտրեց, զմարդ գտավ, ասեց.—Էկո՛, տեսնամ ի՞նչ իս էրի, քու խելքն օր կասեր է՞դ է։

Մարդն կասե.—Իմ խելքն էդ է, կհավնիս, տուր զքու փարեն, չըս հավնի՝ դու քզիկ, ես՝ ընծիկ։

Թուճարն է, հեղրմ հ՚ընկեր է, հինգ հարիր օսկու կսկծուն, հինգ հարիր լէ կհանի կիտա, կասե. «Տեսնամ էդորնէ ի՞նչ կէլնի»։

«Խելք կա, փարա չկա» ասողն կէլնի զհինգ հարիր օսկին կառնե, կէրթա կզարկե ըստհաղ խարըրի գլուխ։ Կառնե խարար, կբերե զխսլի փոշիքն կըլնա մեշ ու կկոճե վիրարու։ Օր կկոճե վիրարու, կէլնի կընկնի շուկի մեշ, կասե ու կօլըրդի. «Խելք կա, փարա չկա, խելք կա, փարա չկա» ու կէրթա շուկի լենք ու հ՚էրկենք կիգա։

Թուճար կլսե, կկանչե, կասե.—Ի՞նչ էրիր զհինգ հարիր օսկին։

— Էրի՛, հրմկա չըմ կռնա ասի։

Չէ՞ փարի մըռմուռ զարկեր է թուճրի սիրտ, ինք լէ քիչըմ մալ կսկիծ է, կհանե հինգ հարիր օսկի լէ կիտա, բալքիմ ղրմեն բիրտան առնե։

Մարդ կասե.—Հինգ հարիր օսկին չխիմե, հազար օսկի պետք է իտաս։

Թուճրի ճար կկտրի, հազար օսկի լէ կհանե կիտա։

Մարդ կառնե զհազար օսկին, կիգա, կիտա կառնե կյամիմ՚, չորս լէ մշակ կբռնե, զհախ ուրանց լէ փեշին կիտա։ Կբերե զխըսլի փոշու խարըրներ, կբառնա վըր կյամում՚ ու զկյամու գլուխ կթողե։ Ինչ գլխու ցավանք էնիք, չորս ամիս կէրթա վըր ծովուն, իսկի շենլըկի հ՚ըռաստ չիգա, տակ ուրանց ջուր, վերև ուրանց հ՚էրկինք մինակ կժանգոտա։ Չորս ամսուց վերջ կյամին կիգա սարում՚ հ՚առեջ կկանի. «Խելք կա, փարա չկա» ասող մարդ կասե.—Հանդե՛, ես կէլնիմ էդա սար, էդտեխ ի՞նչ տեսակ ջանավար ասիս կա, ես փետով կխըդիմ էնդոնց բուն, դուք բացեք զէդա խարըրներու բերան ու զփոշին տվեք քամուն, հանդե էնդոնք կթալին փախնին, կիգամ զձղիկ կառնիմ, կէրթամ. ինչ օր կցուցում մեկ-մեկ լըցեք խարըրներ ու դրեք կյամու մեջ։

Կասե ու կէլնի կէրթա խըտե էդ ջանավըրներու բուն։ Էդ մըշկըներ կտեսնան օր ալալորումըմ հ՚ընկավ սար, ջանավըրներ կօռնան ու կփախնին ծովու դին, կբանան զխարըրներու բերան ու զփոշին կիտան քամուն։ Դումանըմ կէղնի, աստված ինք նշանց չիտա, մատ խոթիս մարդու աչք՝ չտեսնա, ջանավըրներ հ՚ըմեն կօռնան, կիգան զուրանք թափին ծով։

Մարդն է, կտեսնա օր ջանավարքմ չմնաց, կիգա կառնե զուր մշկներ ու խարբրներ կէրթա։ Դու մ'ասի, էդ սար անգին քարերու սարն է էղի. կբերե ղրմեն կըլնա անգին քար, կբառնա վըր կյամուն ու կքշե կիգա։ Օր կիգա, ճամբու հետ մշկներու սիրտ կխարբալի, հ'իրարու կասին.—Ախպրտա՛նք, մենք չորս ինք, էդա թաք մարդըմ է, հ'ո՞րի իտանք էդա խըդար աղրութ-զմրուխտ էդա մարդուն, առնե էրթա, էկեք զէդի թալինք ծով, առնինք զկյամին, փախինք էրթանք ուրիշ տեխըմ, ծախինք մզիկ, էնինք զմըր իդարեն։

«Խելք կա, փարա չկա» ասող մարդն կտեսնա, օր էդոնք գուբթութեր ին վիրարու մաշֆարա կէնին, կհասկնա օր շնութենըմ կա էդոնց մեջ, կկանչե բերե, բալքիմ հասկնա։ Կկանչե բերե.—Ախպըրտա՛նք, էդա խըդար անգին քար մենք հ'ո՞րի տանինք անդատել ու անբանել թուճրի հետ կիսինք, էկեք էնինք հինգ հիսա, հինգ հարիր խարար չէ՞, հարիր խարար քզիկ, հարիր՝ մեկ ախպոր, հարիր՝ մեկ ախպոր, հարիր լէ՝ ընծիկ։

Մշկներ կասին. «Շատ աղեկ կասե, էլ մենք հ'որի մտնինք էդ մարդու մեղքի տակ, կէրթանք կէլնինք էնտեխ, կիսինք վիրարուն»։

Կիգան օր կէլնին կյամուց դուրս, կասին.—Էկեք կիսենք։ Մարդ կբռնե ձեռք ուրանց հըլոնդե դուրս.—Դուք ի՞նչ շուն իք օր ձզիկ բան իտամ, իմ խելք չէզնե՞ր ձըր բերա՞ն պիտի բերեր, ձըր հախ առեր իք, թողեք գացեք։

Կքերին զանկըճտակ ուրանց, փոռ-փոշման կթողին կէրթան։ Մշկներ օր կթողին կէրթան, շուհաբ կճամբե թուճրին, թուճար կէլնի կիդա, ղշվըլներ կհանե դուրս, կճամբե կէրթա ուր տուն։

Թուճարն է, որ կտեսնա զհինգ հարիր ջըվալ անգին քարերն, ճըլաքութին կբռնե, կասե.—Քանի սաղ իմ, հերիք է ընծիկ, վալ՛յի, էդ մարդուն քարըմ չպիտի իտամ խոթե ուր աչք. կբռնե ձեռքեն էնե դուրս, վել հասըլ իմալ օր ինք էրեր էր մշկներու գլուխ, թուճար լէ հըմալ կէնե ուր գլուխ։

Մարդն է, կէլնի զձեռք դնե ծոցք, քերե անկշի կոթն ու կընկնի քաղքի լենք ու հ'էրկենք, կէրթա զչորս մշակ լէ կգտնա, զուր գլխու գալած կպատմե։ Մշկներն ու էդ մարդ կմտածին՝ ինչ էնիք, ինչ չէնիք։ Մեկն կասե.—Էրթա՛նք գիշերով մտնիք տուն, կապինք զօտք ու ձեռք, վերցունք զշըվըլներ, առնինք հ'իգանք։

Մեկն կասե.—Չէ՛, էրթանք գանգտով էնիք։

Սորա, «Խելք կա» ասող մարդն կասե.—Չէ՛, աղեկ մեկ լէ էրթանք դողութենով էնիք։

Կէլնին կէրթան թուճրի տան դին, կիշքին օր թուճար հ՝էլեր է դուրս, կօլըրդի, կվերցուն զթուճար առոք-փառոք կղնին կյամու մեջ, ուրանք լէ կնստին կյամու մեջ ու զգլուխ կթողին։

Թուճարն է, լուսուն աչք օր կրանա, կտեսնա օր ինք հանդե մըջ ծովուն, «Խելք կա» ասող մարդն ու չորս մշակ լէ ուր բոլոր։

Կասին թուճրին.—Իմալ օր դու էրիր մըր գլուխ, մենք լէ հըմալ էրինք քու գլուխ, հըմկա զքզիկ բերեր ինք հ՝ոդա, զմըր ջըվըլներ օր չիտաս, զքզիկ պիտի վերցունք թալինք ծովու մեջ, փրթինք ազատինք, նը՛ մզիկ էղնի, նը՛ քզիկ։

Թուճար կտեսնա օր ճար չկա, կասե. «Կանի խաբիմ զէդոնք գիս տանին քաղաք, բանըմ չըմ իտա»։

Կասե.—Գիս տարեք քաղաք, ինչ օր կուզիք, կիտամ։

«Խելք կա» ասող մարդ կասե.—Ես քզիկ ամըլյաթ չըմ էնի, գիրըմ դրե քու տղին, տուր առնիք զքզիկ էրթանք, թը չէ՝ զքզիկ կթալինք ծով, խեղդիս։

Թուճրի ճար կկտրի, կէլնի գիրըմ կգրե տղեն. «Տղա, էն հինգ հարիր ջըվալ անգին քար օր դրուկ է ֆըլան տեխ, էդա մարդիկ օր կիգան հ՝ուզին, տվեք թըղ առնին էրթան»։

Գդիրն օր կգրե խըլըսի, «Խելք կա» ասող մարդ հ՝ընկերներուն կասե.

— Զզիկ տեսնամ, բռնեք զթուճրի օտք ու ձեռք, լոռտեք ծովու մեջ, հեղըմ լէ էդ տեսակ ճըլաքութին չէնե։ Մեկ լէ օր սաղ մնա, մզիկ լազաթ չպիտի իտա։

Կվերցուն ու չըրո՛մփ, ծովու մեջ. թուճարն կխեղդվի։ Զկյամու գլուխ կթորկին, կիգան, կբերին զթուղթ կիտան թուճրի տղին, կառնին զհինգ հարիր ջըվալ անգին քարն, կտանին կիսին վիրարու, նոր կփրթնին, ազատին։